

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆՆԵՐ

ՄԵԽԻԹԱՐ ԱՐԲԱՆՔՈՐ ՅԻՇԱՏԱԿԸ

Ապրիլ 30

Երնչ. Միխիթար Արբանքօր մահուան տա-
րեգարձին յիշատակը այս տարի, պատե-
րազմի պարագաներէն հարկադրուած, տո-
նախմբուեցաւ Ս. Զենոնի ամարանոցին
մէջ՝ Ապրիլ 30ի կիրակին յետ միջօրէի:
Աւանդական դրարար ներդրեցան խօսե-
ցաւ Հ. Յուսիկ Պուշիկեան՝ նկատելով
Երանաշնորհ Հայրս իբրեւ «այր ցաւոց»,
որ խաչի ճամբով հրահանգուած Նախա-
խնամութեան ձեռքը, կը դառնար վշտակիր
ու համբերատար առաքեալը իր Աղբին:
Եւջոյն թէ ո՛րքան խոր եւ համոզուած
սէր ունէր ան խաչակրութեան, սիրելով
աւելի իր թշնամիները քան բարեկամները,
հալածանքը քան դովեստը: Այս հոգին է որ
ան ներշնչած էր նաեւ իր աշակերտներուն,
որոնց յաճախ կը կրկնէր թէ իր աստուա-
ծակերտ Հաստատութեան ամբողջութիւնը կը
պարտի կրած թշնամութիւններուն:
Տեղի ունեցան եւս երգեր ու արտասա-
նութիւններ վանքի նորընծաներու կողմէն:
Հուսկ Գերպ. Արբանքօրը, Սրապիոն վ.
Ուլուհոճեան՝ իր հուսկ բանքին մէջ, նը-
կատեց Միխիթարը իբրեւ Աստուծոյ վըր-
կուած դարուն մարդը՝ որ հիմը պիտի
դնէր ազգային գիտական ու բարոյական
վերածնութեան:



ԱՄՍՎԵՐՁԻ ՀԱՆՐԱՅԻՆ
Մ. - ՌԱՓԱՅԵԼԵԱՆ ՎԱՐՓԱՐՆԻ
ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ

Մայիս 28

Վարժարանին Տեսչութիւնը նկատի առ-
նելով իրեն յանձնուած աշակերտներուն
կեանքի ապահովութեան տեսակէտը, 1943
-1944 տարեշրջանը վերաբացաւ Ազգային

ամարանոցին մէջ, փոխադրելով Վենետի-
կէն դպրոցական անհրաժեշտ առարկաներ:
Դժբախտաբար տարւոյն վերջին ամիսներն
ալ Փաշիստ-հասարակապետականները գը-
րաւած ըլլալով չէնքին մէկ մասը, ստիպ-
ուեցան Ս. Զենոնի խաղաղ միջոցառումին
մէջ սարքել աշակերտաց պարզեւարաշխու-
թեան հանդէսը՝ ի ներկայութեան Միխիթա-
րեան Հայրերու եւ աշակերտութեան:

Մայիս 28ին Հոգեգալստեան կիրակին,
յետ միջօրէի, Նորընծայարանի վարի յար-
կի սրահին մէջ տեղի ունեցաւ համեստ
հանդէսը՝ որ կը բացուէր վարժարանին
աւանդական քայլերգով, որուն կցուեցան
յետոյ մէկ քանի ուրիշ ազգային ու խոտ-
ական երգեր, արտասանութիւններ, մաղ-
թողականներ՝ ուղղուած չրջանաւարտ սա-
ներու, եւ ասոնց հրաժեշտի ողջոյնը ուղ-
ղուած իրենց կրտսեր ընկերներուն:

Հուսկ Ուսումնապետը Հ. Եսայի Գոու-
ղեան ներկայացնելով տարեկան տեղեկա-
տուութիւնը՝ բացատրեց թէ ի՞նչ զոհողու-
թիւն եւ ի՞նչ տաժանակիր նեղութիւն ար-
ժած է դաստիարակ հայրերուն եւ աշա-
կերտներուն՝ այս տարուան ուսումնական
տարին, գտնուելով բոլորովին բացառիկ
պարագաներուն մէջ: Բայց ուրախ էր ձեռք
բերուած արդիւնքէն եւ զոհունակութեամբ
սրտի կը յայտարարէր 9 չրջանաւարտ Սա-
ներու անունները, եկած զանազան երկիր-
ներէ, որոնցմէ չատերը պատերազմով
սկսած են եւ պատերազմով ալ կ'աւարտէին
իրենց ընթացքը: Ապա անցաւ մնացող ա-
շակերտներէն, ոմանց վարձատրութեան՝
բաշխելով իւրաքանչիւր դասարանի երեք
քաջագոյններուն գրեւորական մրցանակներ:

Ե. Դասարան

1. Գեորգ Սագանեան
2. Ալեքսանեան Յարութիւն եւ
Հագիսեան Յակոբ
3. Պաղտատարեան Զարիկ

Բ. Դասարան Լրացուցիչ ընթացքի

1. Ոսկերիչեան Գրիգոր
2. Սարեան Նուրիան
3. Էպէյեան Անդրանիկ



ՏԵՄԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ ԵՒ ՇՐՋԱՆԱԿԱՐՏՆԵՐ 1943 - 44 ՏԱՐԵՇՐՋԱՆԻՆ

Զարիկ աջ. նստած. Հ. ԱԻԵՏԻՔ՝ Հակոբապետ, Հ. ՀՄԱՅԵԱՆ՝ Տեսուչ, Հ. ԵՍԱՅԻ՝ Ուսումնա-
պետ, Հ. ՅՈՒՍԻԿ՝ Տնտես:

Եղիազարեան Զարեհ	Երն. ձիպուքի	1926	Մուտքի վարժարան	1938
Կարապետեան Կարպիս	» Երուսաղէմ	1925	»	1938
Յակոբեան Աւետիք	» Ռուբին	1925	»	1939
Պօղոսեան Էլմոյ	» Իսպահան	1926	»	1939
Պեհեմիլեան Յարութիւն	» Ատիս-Ապեպա	1925	»	1938
Միմասեան Միմաս	» Աթէնք	1928	»	1940
Տէր-Պարսաւեան Շաւարշ	» Վարդէ (Խալիլա)	1927	»	1937
Անդրանիկեան Անդրանիկ	» Ատիս-Ապեպա	1927	»	1938
Աղամեան Յովհաննէս	» Ալֆոնսի (Ֆրանսա)	1927	»	1939

Մայրենի լեզուին մէջ յատուկ սէր ու
ջանք ցոյց տուած ըլլալուն համար՝ առան-
ձին մրցանակի կ'արժանանար Զարիկ Պաղ-
տատարեան:

Իսկ բարի վարքի մէջ ոսկի մետալի կ'ար-
ժանանար Մարտիկեան Ոսկան, արծաթ-
մետալի Ալեքսանեան Յարութիւն. մետալ-
ները յատուկէն սահմանուած նուէրներ էին
Ուխտիս Գերադայձառ Արբանքօր:

Յուզիչ մաղթողական մը կարդաց յետոյ
դպրոցին սիրելի խոտաբոյս Հակիւնը, ուղ-
ղուած չրջանաւարտներուն, չեղտելով թէ
ինչպէս աղնութիւնը եւ բարութիւնը
կեանքին մէջ յաջողութեան գրաւականը կը
կազմեն, եւ յաճախ ամբողջ կեանք մը
կ'արժեն:

Հանդէսը փակուեցաւ Գերպ. Արբանքօր
հայրական քաջալերիչ խօսքերով:

ԽՄԲ.